Արարատ Մ. Հակոբյան
*Պատմ. գիտ. դոկտոր*

# ՄԻ ԱՄԲԱՍՏԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏՔԵՐՈՎ

## Հայրենիքի փրկության կոմիտեի կողմից պետական փողերի իրացման հարցի շուրջ*

**Հայ պատմագրության մեջ մինչ օրս վիճահարույց է մնացել 1921 թ. Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո Հայրենիքի փրկության կոմիտեի (այսուհետև՝ ՀՓԿ) կողմից Երևանից դուրս բերված պետական փողերի հետագա ճակատագրի հարցը:**

Խորհրդայնացված Հայաստանից փողերի և արժեքների դուրս բերման մասին առաջինն իրազեկել են Հայհեղկոմի անդամներ Ս. Կասյանն ու Ավիսը՝ Գ. Օրջոնիկիձեին ուղղված 1921 թ. ապրիլի 6-ի հեռագրով. «Երևանից հեռանալիս դաշնակներն իրենց հետ տարել են պետական արժեքները և ինչպես սովետական, այնպես էլ հայկական բոլոր դրամանիշները»[1]:

Պատմագիտական և հուշագրական գրականության մեջ անհետացած փողերի և արժեքների հարցին, դեպքերի թարմ հետքերով, առաջիններից մեկն անդրադարձել է Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախկին պատասխանատու պաշտոնյա ու մասնագետ, Հայաստանի խորհրդարանին կից Պետական վերահսկիչ մարմնի նախկին ղեկավար, իր հայացքներով ՀԺԿ-ի համակիր Գրիգոր Ջաղեթյանը: Նա, ՀՓԿ-ի գլխավորած տասը հազարից ավելի մտավորականների ու զինվորականների շարքում դեպի Զանգեզուր և ապա Իրան գաղթելով, Թեհրանում լույս տեսնող «Ռանջբար Իրանի» հակադաշնակցական (խորհրդամետ) թերթի 1922 թ. համարներում տպագրել է մի հոդվածաշար, որում անդրադարձել է նաև պետական փողերի խնդրին: Հետագայում այս հոդվածաշարի հիման վրա Երևանում, «Հայաստան» հրատարակչության կողմից, առանձին գրքույկով տպագրվել է Գ. Ջաղեթյանի աշխատությունը[2]: Եվ նրա հոդվածն ու գրքույկն էլ փաստորեն կռվաններ դարձան խորհրդահայ պատմագրության ներկայացուցիչների համար հակադաշնակցական պայքարի ճակատում:

---

*Հոդվածն ընդունվել է տպագրության 10.10.2011:

1 Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ ռևոլյուցիան և սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Եր., 1960, էջ 511: Տե՛ս նաև՝ «Բանբեր Հայաստանի արխիվների» (այսուհետ՝ ԲՀԱ), Եր., 1961, N 1(2), էջ 85:

2 Տե՛ս **Ջաղեթյան Գ.,** Մոտիկ անցյալից, Եր., 1967:

Գրիգոր Ջաղեթյանի հոդվածն արձագանքն էր այն հաշվետվության, որը պետական այդ գումարների վերաբերյալ Թավրիզում՝ 1921 թ. հուլիսի վերջին, ներկայացրել էր Հայաստանի Հանրապետության վտարանդի կառավարությունը՝ վարչապետ Ս. Վրացյանի, ֆինանսների նախարար Հ. Տերտերյանի և հաշվեքննիչ մարմնի անդամներ Գ. Տեր-Մինասյանի, Արշ. Հովհաննիսյանի և Արշ. Խոնդկարյանի ստորագրությամբ:

Հայտնի է, որ Հայաստանի վտարանդի կառավարությունը 1921 թ. հուլիսի 16-ին Թավրիզում գումարված նիստում լսել է ֆինանսական հաշվետվություն Երևանից բերված պետական գումարների ծախսման և առաջիկայում կատարվելիք ծախսումների վերաբերյալ: Ստեղծվել է երեք հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով, որն ուսումնասիրել է կառավարության բոլոր հաշիվները (ելքերն ու մուտքերը)՝ Երևանից դուրս գալուց սկսած մինչև նրա գործունեության դադարեցման վերջին օրը: Այդ հաշվետվության մի մասը 1921 թ. հուլիսի 28-ին տպագրվել է Թավրիզում առանձին գրքույկով[3]:

Գրիգոր Ջաղեթյանը սուր քննադատության է ենթարկել վերոնշյալ հինգ պաշտոնյաների ստորագրությամբ Թավրիզում կազմված «Հաշվետվություն»-ը՝ այդ փաստաթուղթը համարելով «դաշնակցական շեֆերի խարդախ գործելակերպ»՝ «անգիտակից մասսաներին մոլորության մեջ պահելու համար»[4]:

Հենվելով «Հաշվետվության» տվյալների վրա՝ նա արձանագրել է, որ «փետրվարյան ավանտյուրայից հետո դաշնակները Երևանի բանկից և գանձարանից տարան 10 մլրդ-ից ավելի հայկական և ռուսական թղթադրամ»[5]: Ավելին՝ նա կասկած է հայտնել, որ հաշվետվության մեջ նշվածը ամբողջ գումարը չէ, որը «դուրս են բերել Երևանից»[6]:

Այս տեսակետից հոդվածագիրն իրավացի է այն իմաստով, որ «Հաշվետվություն»-ը, իրոք, ամբողջական չէ, քանզի այդ մասին վկայում են նաև Ս. Վրացյանը, Իրազեկը (Հ. Տեր-Հակոբյանը) և ուրիշներ: Իրազեկն իր հուշերում գրում է, որ «Հաշվետվության» մնացած մասը հնարավոր չեղավ տպագրության հանձնել: Այդ հաշիվները, ինչպես նաև կառավարության ամբողջ արխիվը պահպանվում են ՀՅԴ դիվանում[7]:

Մինչդեռ առարկելով, որ Երևանից բերվածը ամբողջ գումարը չէ, Գ. Ջաղեթյանը՝ իբրև խնդրին տեղյակ ֆինանսիստ, պետք է ցույց տար, թե որքա՞ն գումար է ծախսել Հայհեղկոմը իր կառավարման 2,5 ամսում և որքա՞ն է տարել իր հետ փետրվարի 18-ին Երևանից հեռանալիս, կամ՝ որքա՞ն գումար է ծախսել ՀՓԿ-ն իր իշխանավարման մեկուկես ամսում և այլն: Միայն այդ դեպքում կերևար ֆինանսական հաշիվների ամբողջական պատկերը:

Պետական փողերի վատնումների մասին Գրիգոր Ջաղեթյանի դիտարկումների որոշ մասը, անկասկած, տեղին է: Նախ՝ պետք է ընդունել, որ Գ. Ջաղեթյանը՝ իբրև Առաջին Հանրապետության խորհրդարանին կից գործող Պետական վերահսկողության մարմնի ղեկավար և ապա Խորհրդային Հայաստանի ֆինանս-

3 Տե՛ս Հաշւետուութիւն Հայաստանի կառավարութեան դրամների եւ վալիւտայի առ 28 յուլիսի 1921 թւի, Թաւրիզ, 1921 (այսուհետ՝ Հաշւետուութիւն…):
4 **Ջաղեթյան Գ.,** նույն տեղում, էջ 16:
5 Նույն տեղում, էջ 18:
6 Նույն տեղում, էջ 17:
7 Տե՛ս **Իրազեկ Յ.,** Մօտիկ անցեալից (պատմական դէպքեր և ապրումներ 1917-1922), Պէյրութ, 1956, էջ 132:

ների ժողկոմատի պատասխանատու աշխատող, ֆինանսական ոլորտի հարցերում պատահական մարդ չէր: Նա բանիմաց ու քաջատեղյակ մասնագետ էր: Սակայն նրա հոդվածներում, մեր կարծիքով, ակնհայտորեն նկատվում է քաղաքական կողմնակալություն, և պատահական չէ, որ «Ռանջբար Իրանի»-ում հակադաշնակցական քարոզչության նպատակով տպագրված նրա հոդվածաշարը, ինչպես արդեն ասվեց, հետագայում առանձին գրքույկով տպագրվել է Խորհրդային Հայաստանում:

Գրքույկի մեջ ներառված հոդվածներից մեկում՝ «Դաշնակցական շեֆերի հաշվետվությունը», Գ. Ջաղեթյանը գրում է, որ «ապրիլի 2-ին դաշնակցականները, փախչելով Երևանից (ի դեպ, փախչողներից մեկն էլ ինքն է եղել - Ա.Հ.), իրենց հետ տարել էին Հայաստանի պետական բանկի և գանձարանի դրամները, ոսկին և արտասահմանյան արժույթը: Թե՛ նախանջի ճանապարհին և թե՛ Զանգեզուրում, ոչ մի օգնության չգալով խուճապի մատնված անգիտակից ժողովրդին և զինվորականությանը, նրանք, ըստ իրենց քմահաճույքի, վատնել և վատնում են պետական ստացվածքը»[8]:

Սակայն Սիմոն Վրացյանի կառավարությունը, հավանաբար կռահելով, որ պետական փողերի ծախսումների շուրջ հակառակորդ ճամբարի կողմից կարող են շահարկումներ լինել, Սյունիքից Թավրիզ հասնելուն պես իր տրամադրության տակ եղած դրամական միջոցների և վալյուտային արժեքների մուտքի ու ելքի վերաբերյալ կազմում է մի համառոտ հաշվետվություն: 1921թ. հուլիսի 28-ի հաշվետվությունից բացի՝ Ս. Վրացյանը պետական փողերի խնդրին անդրադարձել է իր աշխատություններում[9]: Այս հարցին է անդրադարձել նաև կառավարության անդամ Իրազեկը[10]: Ս. Վրացյանը, Իրազեկը և դաշնակցական այլ գործիչներ փորձել են հիմնավորել պետական փողերը իրենց հետ վերցնելու անհրաժեշտությունը և դրանք նպատակային ծախսելու իրողությունը:

Դրան հակառակ՝ խնդրի հետ առնչություն ունեցող խորհրդահայ բոլոր պատմաբանները կամ հուշագիրները, հենվելով առաջին հերթին Գ. Ջաղեթյանի հրապարակած տեղեկությունների վրա, միանշանակ կերպով դատապարտել են «հանրապետության փողերի յուրացման գործողությունը»:

**Այժմ փորձենք համեմատական քննության միջոցով ներկայացնել իրերի դրությունը և կոնկրետ իրողությունները:**

Ս. Վրացյանը պատմում է, որ Հայիեղկոմը 1921 թ. փետրվարի 18-ին Երևանից խուճապահար փախուստի միջոցին սնդուկներում լցված պետական գանձերի մի մասը միայն հասցրեց տանել իր հետ, իսկ մնացածը ընկավ ՀՓԿ-ի ձեռքը, որը դրանք փակ վիճակում պահեց պետական գանձարանում: Եվ արդեն Փետրվարյան ապստամբության պարտությունից հետո՝ դեպի Զանգեզուր նահանջելիս, ՀՓԿ-ն այդ գումարները տարավ իր հետ հատուկ հանձնախմբի միջոցով, զինվորական ջոկատի հսկողության ներքո[11]: Կնշանակի՝ Հայաստանի պետական գանձերի մի մասը տարել է Հայիեղկոմը, իսկ մյուս մասը՝ ՀՓԿ-ն: Իհարկե, չի կարելի համաձայնել Ս. Վրացյանի այն պնդմանը, թե պետական գանձերի մեծ մասը

8 **Ջաղեթյան Գ.,** նույն տեղում, էջ 16:

9 Տե՛ս **Վրացյան Ս.,** Հայաստանի Հանրապետություն, Եր., 1993, նաև՝ Կեանքի ուղիներով, հ. Զ, Պէյրութ, 1967:

10 Տե՛ս **Իրազեկ Յ.**, Մօտիկ անցեալից, Պէյրութ, 1956:

11 Տե՛ս **Վրացյան Ս.**, Հայաստանի Հանրապետություն, էջ 667:

բաժին ընկավ Հայհեղկոմին[12]: Հստակ տվյալներ կան, որ փետրվարի 18-ի երկրորդ կեսին Հայհեղկոմը Երևանից հեռանալիս այլ բեռների հետ միասին իր հետ տարել էր 12 պարկ հայկական չեկեր և խորհրդային թղթադրամ, ինչպես նաև դրամի տպագրության կլիշներ[13]: Եթե նկատի ունենանք, որ Հայհեղկոմը իր հետ տարել է 12 պարկ դրամ և գանձ, իսկ ՀՓԿ-ն՝ միայն հայկական դրամով բեռնված 15 սնդուկ (արկղ)՝ չհաշված խորհրդային դրամներով և վալյուտայով արկղերը, ապա ինքնին պարզ է դառնում, որ ՀՓԿ-ն իր հետ տարել է ավելի շատ գումար, քան Հայհեղկոմը: Բերված փաստը կասկած չի հարուցում, որովհետև այդ մասին հավաստում է նաև Խորհրդային Հայաստանի չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանը, ով անձամբ է վերահսկել Երևանի կայարանից դեպի Ղամարլու և Վեդի փոխադրվող բեռների քանակն ու անվտանգությունը: Ընդ որում՝ նշված 12 պարկից 6-ը կազմել են մի քանի հարյուր միլիոնի հասնող հայկական չեկեր և վեց պարկն էլ՝ խորհրդային թղթադրամ: Այս կապակցությամբ Ս. Վրացյանը անարդար է համարում պատմագիտական և այլ գրականության մեջ տեղ գտած այն մոտեցումը, երբ բոլշևիկների տարած ու յուրացրած վերոնշյալ գումարների մասին ոչ մի անգամ, ոչ մի տեղ չի խոսվել և դրանց վերաբերյալ Հայհեղկոմը որևէ հաշիվ չի ներկայացրել, մինչդեռ ՀՓԿ-ի տարած գումարների մասին ներկայացվել է հաշվետվություն, սակայն մինչ օրս հենց դրա մասին է շարունակում խոսվել՝ բացասական երանգավորումով[14]:

Ըստ Ս. Վրացյանի ներկայացրած հաշվետվության՝ ՀՓԿ-ի տրամադրության տակ եղել են երեք տեսակի դրամներ. ա) Հայկական դրամանիշեր ու չեկեր, բ) խորհրդային դրամներ և գ) վալյուտային արժեքներ. այն է՝ 15 համարակալված արկղեր, հայկական դրամներով, ընդամենը՝ ինը միլիարդ չորս հարյուր միլիոն (9.400.000.000) ռուբլի՝ չեկերի հաշվով: Դրանց մաս-մաս ծախսումները սկսվել են Բաշ-Գառնիից, որոնց համար կազմվել են համապատասխան ակտեր: Հաշվետվության մեջ ասված է, որ հինգ արկղի գումարը ծախսվել է Բաշ-Գառնիում՝ մարդկանց ավանների և ռազմաճակատի կարիքների համար: Մնացած տասը արկղերը՝ 5.750.000.000 ռուբլու պարունակությամբ, ինչպես նաև չծախսված մեկ մլրդ ռուբլին տեղափոխվել է Զանգեզուր[15]:

Ըստ հաշվետվության՝ Զանգեզուր բերված 6.750.000.000 միլիոն ռուբլուց Ղաթարի հանքեր են հասել և պետական գանձարկղ մտել 5.882.838.000 ռուբլի՝ հայկական դրամանիշերով: Պակասորդ համարվող 867.162.000 ռուբլին ծախսվել է Բաշ-Գառնիից Ղաթարի հանքեր ընկած ճանապարհին կամ՝ իբրև կանխիկ (առհաշիվ) գումարներ մնացել զանազան անձանց մոտ[16]:

Խորհրդային դրամը կազմել է 650 մլն, որից Բաշ-Գառնի է տարվել 587 մլն ռուբլի: Դրա մի փոքր մասը՝ 95 մլն ռուբլին, հանձնվել է ճակատի հրամանատարներին՝ ռազմապաշտպանական կարիքների համար: Մնացած 491 մլն ռուբլին փոխադրվել է Զանգեզուր՝ Ղաթարի հանքեր: Սակայն այդ գումարից Ղաթարի

12 Տե՛ս **Վրացյան Ս.,** նույն տեղում:

13 Տե՛ս **«Ազատ Հայաստան», 22 փետրվարի 1921թ., Амирханян Ш. М.,** Из истории борьбы за советскую власть в Армении, Е., 1967, с. 134, **Таирян И.,** XI Красная Армия в борьбе за установление и упрочнение советской власти в Армении, Е., 1971, с. 221 и др. (Պետական փողերի խմբաքանակում ամենաարժեզրկվածը հայկական չեկերն էին: Դրա փոխարեն խորհրդային ռուբլու կուրսը անհամեմատ բարձր էր ):

14 Տե՛ս **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 667:

15 Տե՛ս Հաշւետւութիւն…, էջ 3-4, նաև **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 668:

16 Տե՛ս Հաշւետւութիւն…, էջ 4-5, նաև **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 669:

հանքեր է հասել 427.763 հազար ռուբլի, մնացորդը՝ շուրջ 64 մլն ռուբլի, ծախսվել է ճանապարհին, իսկ Ղաքարում մուտքագրված ընդհանուր գումարից շուրջ 250 մլն խորհրդային ռուբլին (մինչև հուլիսի 6-ը, այսինքն՝ Ղաքարի հանքերը թողնելու օրը) ծախսվել է տեղում՝ ավանսների և այլ ձևով, որի վերաբերյալ ֆին. նախ. գործում կան համապատասխան փաստաթղթեր[17]:

Այսպիսով՝ 1921 թ. հուլիսի 6-ին՝ Ղաքարի հանքերը թողնելուց հետո, գանձարանում եղել է 178 մլն խորհրդային ռուբլի, որից 14,5 մլն ռուբլին կառավարությունն իր հետ դուրս է տարել, իսկ մնացորդը՝ 163,5 մլն ռուբլին, մնացել է Ղաքարի հանքերում:

Ինչ վերաբերում է արտարժույթին, ապա դարձյալ հատուկ հանձնաժողովի միջոցով 1921 թ. մարտի 25-ի կազմած ակտով պետական բանկից դուրս են հանվել և Բաշ-Գառնի տարվել արտասահմանյան արժույթ և այլ արժեքներ, որոնց ընդարձակ ու հանգամանալի ցանկը կազմում է մի քանի էջ[18]:

Ներկայացված արժույթի ցանկից առավել մեծ գումար են կազմել ռուսական բոլոր տեսակի դրամները. ընդամենը՝ 147 հազ. ռուբլի, ամերիկյան դոլարներ՝ 23 հազ., անգլիական ֆունտ ստերլինգ՝ 8511:

Այնուհետև բերված են ֆրանսիական, իտալական, թուրքական, պարսկական և այլ դրամական միավորներով արժույթներ, որոնք առանձնապես մեծ գումարներ չեն կազմում: Ցանկում կան նվիրատվության կամ այլ ձևով ձեռք բերված ոսկի, արծաթյա գոտիներ, ապարանջաններ, մատանիներ և այլն, որոնք, կարծում ենք, ավելորդ է մեկ առ մեկ թվարկել և ըստ այն ժամանակվա դրամական կուրսի՝ հաշվարկներ կատարել:

Սիմոն Վրացյանը տեղեկացնում է, որ Հայաստանի Հանրապետության կառավարության հուլիսյան հանկարծակի նահանջի ժամանակ արտարժութային վերոնշյալ ընդհանուր ֆոնդից մի որոշ մաս մնացել է Ղաքարի հանքերում և էվակուացիայի չի ենթարկվել[19]:

Ակներև է, որ արտասահմանյան արտարժութային միջոցների մեծ մասը դուրս է բերվել արտասահման և՛ գաղթականության, և՛ վտարանդի կառավարության գործիչների անձնական կարիքների, և՛ այլ նպատակների համար: Հաշվետվության մեջ, օրինակ, նշված է, որ Թեհրանից Փարիզի հայկական պատվիրակությանն է ուղարկված ավելի քան 500 հազար ղռան (պարսկական դրամական միավոր) գումար[20]:

1921 թ. հուլիսի 28-ից մինչև սեպտեմբերի 1-ը գաղթականության և այլ կարիքների համար ծախսվել են թուրքական 5 ոսկի լիրա, պարսկական 213 հազար ղռան և 1.7 մլն խորհրդային դրամ[21]:

Ամփոփելով հաշվետվության տվյալները՝ կարելի է եզրակացնել, որ դրանք հիմնականում վստահություն են ներշնչում: Սակայն չի բացառվում, որ բերված տվյալները, ինչպես Գ. Ջաղեթյանն է նշում, կարող են թերի լինել: Բայց վստահություն է ներշնչում այն, որ 1921 թ. հուլիսյան գաղթի արտասովոր պայմաննե-

17 Տե՛ս Հաշվետվություն…, էջ 5-6: Տե՛ս նաև՝ **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 669 (չեկայի նախագահ Շ. Ամիրխանյանն իր հուշերում գրում է, որ դաշնակցականները Երևանից հեռանալիս պետական գանձարանում արտասահմանյան ոչ մի վալյուտա (արտարժույթ) չէին թողել: Տե՛ս **Амирханян Ш. М.,** Из истории борьбы за советскую власть в Армении, Е., 1967, с. 91:

18 Տե՛ս Հաշվետվություն…,էջ 6-20: Տե՛ս նաև՝ **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 670-677:

19 Տե՛ս **Վրացյան Ս.,** նույն տեղում, էջ 674:

20 Տե՛ս **Վրացյան Ս.,** նույն տեղում:

21 Տե՛ս նույն տեղում, էջ 677:

րում հաշվետվություն կազմած հանձնախմբի անդամները բարեխղճորեն նշել են ֆինանսների նախարարության ելևմտի հաշիվների, կատարված ծախսերի հրամանների համարները և այլն:

**Որ ՀՅԴ-ն հանրապետության փողերը կողոպտելու և արտասահման տանելու մտադրություն չի ունեցել, երևում է նրանից, որ Երևանի 1920 թ. դեկտեմբերի 2-ի Լեգրան-Դրո համաձայնագրով, երբ Հայաստանը խաղաղ կերպով խորհրդայնացվեց, Սիմոն Վրացյանի կառավարությունը պետական բանկում ու գանձարանում ամփոփված պետական ամբողջ փողը, հարստությունը, նյութական արժեքները անվերապահ և օրինական կարգով հանձնեց Հայհեղկոմին: Այս հարցում չի եղել սկզբունքային որևէ առարկություն:** Սա ցույց է տալիս, որ նախկին կառավարությունը և վարչական ապարատը անկեղծորեն մտադիր է եղել մնալ, աշխատել ու ապրել խորհրդայնացված հայրենիքում:

Իհարկե, խորհրդային լրատվամիջոցներում հանդիպում են դաշնակցական նախկին առանձին պաշտոնյաների հասցեին ուղղված երբեմն՝ տեղին, երբեմն էլ՝ զրպարտչական նյութեր: Օրինակ՝ Հայհեղկոմի «Կոմունիստ» պաշտոնաթերթի 1920 թ. դեկտեմբերյան համարներից մեկում տպագրվել է մի սաղրիչ հոդված այն մասին, որ իբր դեկտեմբերի 6-ին Ղարաքիլիսայից Թիֆլիս տանող ճանապարհին ձերբակալված և Երևան բերման ենթարկված մի խումբ դաշնակցական գործիչների մոտ (Հ. Օհանջանյան, Ռ. Դարբինյան, Հ. Տեր-Դավթյան և ուրիշներ), ընդամենը 19 հոգի, հայտնաբերվել է 15 ֆունտ ոսկի, մեծ քանակությամբ պետական դրամ և այլն[22]:

Նման մեղադրանքի առնչությամբ Ս. Վրացյանը թերթի խմբագիր և լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանից պահանջել է հերքում տպագրել, պայմանով, որ եթե իր գրածը ճիշտ դուրս չգա, իրեն ձերբակալեն և դատեն: Սակայն Ա. Հովհաննիսյանը ոչ միայն հերքում չի տպագրել, այլև պատասխանել է, որ «Դաշնակցության դեմ պայքարի բոլոր միջոցները ներելի են (ընդգծումը մերն է- Ա. Հ.)»[23]:

Սակայն այլ իրավիճակ ստեղծվեց Փետրվարյան ապստամբության անկումից հետո: Այս անգամ կառավարությունը՝ ՀՓԿ-ի գլխավորած նույն Սիմոն Վրացյանը և նրա վարչապարատը, դեպքերի բերումով, այլևս Հայաստանում մնալու հնարավորություն ու հեռանկար չտեսնելով, ուստիև՝ իրենց ու գաղթականության մեկ տասնյակ հազարի պահպանման (փոխադրման, սննդի, տեղավորման, բուժման և այլն) նպատակով, իրենց հետ տարան պետական փողերն ու արժեքները: Կարելի է քննադատել, բայց ինչ-որ տեղ նաև՝ ըմբռնումով մոտենալ նման գործողությանը: Սակայն, որպես կանոն, պատմագիտական և հուշագրական գրականության մեջ հիմնականում քննադատվել ու դատապարտվել է ՀՓԿ-ի այս քայլը՝ սովյալ և քայքայված երկիրը անկոպեկ թողնելու իմաստով:

Իր հերթին հակառակ կողմն էլ կարող է բերել իր նման քայլը այս կամ այն կերպ արդարացնող փաստարկներ՝ քաղաքական թշնամանքը բոլշևիկների հետ, տասը հազար գաղթականության խնամատարությունը, առանց որևէ միջոցի արտասահմանում հայտնվելու հեռանկարը և այլն:

Կարծում ենք, որ ՀՓԿ-ի նման քայլին կարելի է ըմբռնումով մոտենալ, որովհետև հեղափոխությունների, բռնի իշխանափոխությունների, քաղաքացիական կռիվների ժամանակ, որպես կանոն, այդպիսի փաստեր արձանագրվել են շատ

22 Տե՛ս «Коммунист», Эривань, 7 декабря 1921г.
23 **Վրացեան Ս.,** Յուշեր մոտիկ անցեալից // «Յայրենիք», 1923, թիվ 2 (դեկտեմբեր), էջ 68-69:

երկրներում և դրանում առանձնապես արտառոց բան չպետք է տեսնել: Նման փաստեր են արձանագրվել, օրինակ՝ Ռուսաստանում: 1917-1920 թթ. հեղափոխությունների և քաղաքացիական կռիվների ժամանակ տեղի են ունեցել ցարական Ռուսաստանի պետական գանձերի (40 հազար փութ ոսկի և պլատին) կողոպուտներն ու յուրացումները Սիբիրում, կամ, օրինակ՝ մեր անմիջական հարևան Վրաստանի խորհրդայնացումից հետո վրաց-մենշևիկյան կառավարությունը երկրի պետական փողերը այլ հիմնարկությունների հետ փոխադրել էր Բաթում: Եվ երբ 11-րդ կարմիր բանակի առաջապահ զորամասը 1921 թ. մարտի 18-ին մտավ Բաթում, մենշևիկյան կառավարությունը (50-ից ավելի մարդ), իր հետ վերցնելով պետական գանձարանի փողերն ու հարստությունները, իտալական մի շոգենավով անցավ արտասահման[24]: Բերենք մեկ ուրիշ փաստ. Բաքվի Հայոց ազգային խորհրդի նախագահ Ա. Գյուլխանդանյանը իր հուշերում գրում է, որ Բաքվի Կոմունայի անկումից հետո Ստ. Շահումյանի գլխավորած կառավարությունը և նրան հավատարիմ ուժերը 1918 թ. օգոստոսին Բաքվից նավերով հեռանալիս իրենց հետ տարել էին «բանկային հարստություններ»[25]:

Մեր ձեռքի տակ եղած տվյալները ինչ-որ չափով լույս են սփռում դրամական այն ծախսերի ու հատկացումների վրա, որոնք կատարել են ՀՓԿ-ն և ապա՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը Երևանից դուրս գալուց հետո՝ սկսած Բաշ-Գառնիից մինչև Սյունիք և Թավրիզ:

Ապստամբության պարտությունից հետո Արարատյան Հայաստանից դեպի Դարալագյազ և Զանգեզուր «քսենոֆոնյան տասը հազարի նահանջի» ժամանակ, անշուշտ, կատարվել են դրամական ծախսեր: Տվյալներ կան, որ Արարատյան Հայաստանից դեպի Սյունիք և Պարսկաստան գաղթածների որոշ հատվածների դրամ էր բաժանվում՝ խմբապետերին, ուսանողներին և կուսակցականներին տրվում էր ամիսը 6 թուման, իսկ կառավարության անդամներին՝ 18 թուման[26]: Օրինակ՝ Հ. Տերտերյանը, որը ՀՓԿ-ի ֆինանսների նախարարն էր և հուշեր է զետեղել Ս. Վրացյանի հուշագրական աշխատության մեջ, տեղեկացնում է, որ Բաշ-Գառնիում խմբապետ Սասունցի Մուշեղին զինվորական և պարենային ծախսերի համար հատկացվել է 100 մլն ռուբլի: Արդեն Թավրիզում խմբապետ Մուշեղը Հ. Տերտերյանին և ֆինանսական հանձնախմբի մյուս անդամներին է ներկայացրել կատարված ծախսերի «շատ կանոնավոր մի հաշիվ»: Եվ բնական է, որ Հ. Տերտերյանը շատ բարձր կարծիք է հայտնել «քաջ, սառնասիրտ, ազնիվ, մաքուր և չափից դուրս համեստ»[27] այդ մարդու մասին:

Այն բանից հետո, երբ կարմիր բանակը 1921 թ. հունիսի 29-ին գրավում է Սիսիանը, և անմիջական վտանգ է կախվում Գորիսի և Կապանի վրա, կառավարությունը որոշում է վճարել պաշտոնյաների ռոճիկը հայկական դրամով և տրամադրել միանվագ նպաստ յուրաքանչյուրին՝ 50 հազարական ռուբլի խորհրդային դրամով: Այնուհետև հանձնարարվում է ֆինանսների նախարարին մնացած դրամները Գորիսից փոխադրել Հանքեր (Կապան)[28]:

---

24 Տե՛ս **Щетинов Ю. А.,** История России XX век, М., 1999, с. 122. Борьба за победу советской власти в Грузии, документы и материалы (1917-1921 гг.), Тб., 1958, с. 708.

25 Պատմագրութիւն Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (յոդվածների ժողովածու), հ. Դ., Աթէնք, 1995, էջ 35:

26 Տե՛ս **Հարությունյան Ա.,** Գարեգին Նժդեհի 1921 թ. Թավրիզի դատավարությունը, Եր., 2004, էջ 34:

27 **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, հ. Զ, էջ 304:

28 Տե՛ս **Իրազեկ Յ.,** Նույն տեղում., էջ 109:

1921 թ. հուլիսի 1-ին Հայաստանի կառավարությունը Գորիսից Կապան անցնելու ճանապարհին` Հանքերում (Ղաթարում), որոշում է 5 մլրդ ռուբլի հայկական նոր (լոնդոնյան) դրամները թաղել և իր հետ վերցնել 100 մլն ռուբլի հայկական դրամ, նաև` խորհրդային 120 մլն ռուբլի և «վալյուտան»[29]: Դրամների փոխադրման համար կազմվում է հանձնախումբ` Հ. Տերտերյան, Ս. Մելիք-Յոլչյան և Ղափանցի Սամսոն բեկ կազմով[30]: Սակայն այդպես էլ անհայտ է մնում ավելի քան 5 մլրդ ռուբլու հետագա ճակատագիրը: Եթե այդ գումարը, իրոք, թաղվել է Ղաթարի հանքերում, ապա պետք է, որ փոխանցվեր Խորհրդային Հայաստանին, որի վերաբերյալ, սակայն, չկա որևէ տեղեկություն:

Գ. Նժդեհի` ՀՅԴ Գերագույն դատական ատյանում տված բացատրության մեջ նշվում է, որ Արաքսի վրա լաստանավի կառուցման նպատակով կառավարությունը ծախսել է 100-ից ավելի ոսկի[31]: Հայտնի է, որ այդ լաստանավի նախագծի աշխատանքներին մասնակցել է նաև ճարտարապետ Ալ. Թամանյանը, բայց դրա գործարկումը հաջողությամբ չի պսակվել:

Ըստ Սիմոն Վրացյանի` լաստերով գաղթականության գետանցը վճարովի էր, յուրաքանչյուր մարդու համար` կես ոսկի, որը վճարվում էր Երևանից բերված պետական փողերով[32]:

Իրազեկը տեղեկացնում է, որ Արաքս գետը անցնելու համար իբրև մաքսատուրք Ղարադաղի խան Ամիր Արշատը յուրաքանչյուր անձի համար վերցնում էր մեկ ոսկի, իսկ ավելի ուշ` կես: Եվ այդ փոխադրության ծախսը հիմնականում կատարվում էր կառավարության պետական փողերով[33]: Իհարկե, որոշ ունևոր մասն էլ գետն անցնում էր իր միջոցներով:

Իրազեկի հաղորդած տվյալներով` գաղթականների Արաքսն անցնելու և մինչև Թավրիզ փոխադրման ընդհանուր ծախսերը, ըստ դրամական միավորների, կազմել են 42223 պարսկական ռիալ+ 2358 թուրքական ոսկի լիրա + 1188 ռուբլի ռուսական ոսկի + 168 ռուբլի արծաթ + 55 դոլար + 332,5 ֆ. ստերլինգ ոսկի + 1470 ֆրանկ ոսկի և 1 մլն ռուբլի խորհրդային դրամ[34]:

«Գաղթականության կոմիտեի» հաշվառած տվյալներով` Իրան (Արաքսն) անցած գաղթականների ընդհանուր թիվը կազմել է 7836 մարդ: Գոյություն ունի մեկ այլ տվյալ: Դա Ամիր Արշատի եղբոր` Իջլալ խանի կազմած ցուցակն է, որում հաշվառված է Արաքսն անցած և դրա համար վճարած գաղթականների քանակը` 8942 մարդ: Այսինքն, կարելի է ասել, որ Արաքս գետն անցել է շուրջ 9000 մարդ[35]: Իջլալ խանի կազմած տվյալը ավելի ստույգ է, քան գաղթականության մարմնինը, որովհետև գաղթականների մի մասը (ստացվում է 1106 մարդ) փաստորեն գաղթականության կոմիտեի մոտ չեն ցուցակագրվել (հաշվառվել), որովհետև օգնություն ստանալու կարիք չեն ունեցել:

Բ. Իշխանյանը վկայում է, որ մինչև հունիսի 5-ը Արաքս գետն անցել էր 6000 մարդ[36]: Վ. Մինախորյանը հայտնում է, որ ապրիլի 25-ից մինչև հուլիսի կեսը

29 **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, h. Զ, էջ 181:
30 Տե՛ս նույն տեղում, էջ 128-129:
31 Տե՛ս **Հարությունյան Ա.,** նույն տեղում, էջ 137:
32 Տե՛ս **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, h. Զ,էջ 178:
33 Տե՛ս **Իրազեկ Յ.,** նույն տեղում, էջ 135:
34 Տե՛ս **Իրազեկ Յ.,** նույն տեղում, էջ 136:
35 Տե՛ս նույն տեղում:
36 Տե՛ս **Իշխանեան Բ.,** Երկու ամիս բոլշեւիկեան բանտում (յաւելուած),Գահիրէ, 1924,էջ 190:

Արաքս գետն անցել է 8042 մարդ[37]:

Ս. Վրացյանը տեղեկացնում է, որ Թավրիզում կուտակվել էին ավելի քան 10000 քաղաքական տարագիրներ: Ի դեպ, գաղթականներին Թավրիզում տեղավորելու գործում հսկայական է եղել Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանի դերը: Ս. Վրացյանը վկայում է նաև, որ սրբազանի նախագահությամբ ստեղծվեց մի հատուկ հանձնախումբ, որի տրամադրության տակ դրվեց Հայաստանից բերված արտարժույթի մեծ մասը: Հետագայում հանձնախումբը առանձին գրքույկով տվել է իր գործունեության հաշվետվությունը[38]:

Խորհրդային Հայաստանի կառավարության համաներման մասին երկու՝ 1921 թ. ապրիլի 10-ի և 23-ի օրենքների շնորհիվ, սկսած օգոստոսի վերջից, Իրան անցած գաղթականության մեծ մասը, հիմնականում՝ արևելահայեր, վերադարձան հայրենիք: Պատմաբան Ա. Սիմոնյանը կարծում է, որ 1921 թ. Արաքսն անցած փախստականների 90 տոկոսը հայրենադարձվեց[39]:

Ըստ Իրազեկի՝ մինչև հոկտեմբեր ամիս հայրենիք է վերադարձել 5858 մարդ[40]: Հարկ է նշել, որ սկսած նոյեմբերից՝ վերադարձը կտրուկ նվազեց: Եթե նկատի ունենանք , որ Արաքս գետն անցել է 8942 մարդ և մինչև հոկտեմբեր նրանցից հայրենիք է վերադարձել 5858 մարդ, ապա կնշանակի, որ արտագաղթածներից հայրենիք չի վերադարձել մոտ 3000-ը, որոնք հիմնականում եղել են արևմտահայեր կամ քաղաքական վտարանդի մտավորականներ ու խմբապետներ: Եթե նրանք վերադառնային, ապա կարելի է ենթադրել, թե իրենց ի՞նչ էր սպասելու խորհրդային-ստալինյան բռնավարչակարգի պայմաններում:

Եթե հավատանք Իրազեկի տեղեկությանը, ապա պարզվում է, որ Հայաստանի Հանրապետության վտարանդի կառավարությունը Իրանում գտնվող գաղթականներին մինչև 1923 թ. կեսերը ցույց է տվել հետևյալ դրամական օժանդակությունը՝ 108272 ղռան պարսկական արծաթ, 500 հազար ռուբլի հայկական և 16.650 հազար ռուբլի խորհրդային թղթադրամ՝ ինչպես Պարսկաստանից Հայաստան վերադարձողների, այնպես էլ դեպի Բաղդադ և այլ ուղղությամբ մեկնողների համար[41]:

1921 թ. հուլիսի երկրորդ կեսին Թավրիզում ստեղծվում է երեք հոգուց կազմված տարագիր կառավարություն՝ Ս. Վրացյան, Հ. Իրազեկ, Վ. Մինախորյան: Խորհրդանշական այդ կառավարությունն իր գոյությունը շարունակեց մինչև 1923 թ., երբ Հայկական հարցի լուծման հետ կապված բոլոր հույսերը ի դերև եղան: Իսկ մինչ այդ արտասահման տարված դրամից մասնաբաժին էր հանվում Հայկական հարցի կապակցությամբ Ս. Վրացյանին Փարիզ գործուղելու ծախսերի համար[42]: Հենվելով արխիվային մի վավերագրի վրա՝ պատմաբան Ա. Հարությունյանը տեղեկացնում է, որ վերջին վարչապետ Ս. Վրացյանը, 1921 թ. նոյեմբերին մեկնելով Թավրիզից, իր հետ վերցրել է 3000 դոլար[43]:

Հայաստանի Հանրապետության վտարանդի կառավարության լուծարման

---

37 Տե՛ս **Մինախորեան Վ.,** Ապրիլի 2-ի գաղթը, «Հայրենիք», 1923, թիվ 3 (դեկտեմբեր), էջ 95:
38 Տե՛ս **Վրացեան Ս.,** Կեանքի ուղիներով, հ. Զ, էջ 183:
39 Տե՛ս **Սիմոնյան Ա.,** Զանգեզուրի գոյամարտը, Եր., 2000, էջ 6:
40 Տե՛ս **Իրազեկ Յ.,** Նույն տեղում, էջ 148:
41 Նույն տեղում, էջ 150:
42 Նույն տեղում, էջ 134:
43 **Հարությունյան Ա.,** նույն տեղում, էջ 22:

մասին որոշում կայացրեց ՀՅԴ Վիեննայի 1923 թ. մայիսի խորհրդաժողովը: Ամռան վերջին տեղի ունեցավ լուծարումը: Կառավարության գույքը, արխիվները հանձնվեցին ի պահ ՀՅԴ Վրեժի ԿԿ-ին: Ս. Վրացյանի հանձնարարությամբ կազմվեց նաև կառավարության կատարած ծախսերի հաշվետվությունը[44]: Ըստ Իրազեկի՝ արտասահման տարված դրամի հիմնական մասը ծախսվել է Թավրիզի տարագիրների խնամատարության (տեղավորման, սննդի, հագուստի, բժշկության և այլն) նպատակով: Նա հայտնում է, որ 1921 թ. հունիսի 10-ից մինչև սեպտեմբերի 15-ը գաղթականներին բժշկասանիտարական օգնություն ցույց տալու համար ծախսվել է 51.049 դռան գումար: Դա արվել է «Հայ գաղթականության ֆոնդի» միջոցով: Միաժամանակ պետք է նշել, որ գաղթականությանը զգալի օգնություն են ցույց տվել նաև Ամերկոմը, Կարմիր խաչը և միջազգային մարդասիրական այլ կազմակերպություններ[45]:

1921 թ. նոյեմբերի 1-ից «Հայ գաղթականական ֆոնդի» վերացումից հետո ՀՀ կառավարությունը առողջապահական նպատակների վրա ծախսել է 34.069 դռան, 15 ռուբլի արծաթ և 300 հազար խորհրդային դրամ[46]: Հայաստանի վտարանդի կառավարությունը իրականացրել է նաև կրթամշակութային բնույթի ձեռնարկներ: 1921 թ. հուլիսի 17-ին գաղթականներին օտար լեզու սովորեցնելու նպատակով (անգլերեն, ֆրանսերեն) բացվել են լեզվագիտական դասընթացներ, որոնք գործել են մի քանի ամիս:

1921 թ. նոյեմբերից Թավրիզում բացվեց պատմալեզվաբանական երկամյա բարձրագույն դպրոց (գործել է 6 ամիս): 1921 թ. հուլիսին ակադեմիկոս Ա. Թամանյանի նախաձեռնությամբ և Հայաստանի Հանրապետության կառավարության օժանդակությամբ այստեղ բացվում է նաև գեղարվեստի ստուդիա, գրադարան-ընթերցարան և այլն[47]:

Իրազեկի հաղորդած տվյալներով՝ ՀՀ կառավարությունը մշակութային այդ ձեռնարկների վրա ծախսել է ընդամենը՝ 33941 դռան[48]:

Բերվող տվյալները ամենևին էլ ՀՓԿ-ի և Հայաստանի վտարանդի կառավարության՝ Երևանից դուրս բերված պետական փողերի և այլ արժեքների ծախսումների հիմնավորվածությունը և նպատակայնությունը արդարացնելու փորձեր չեն: Անշուշտ, այդ ընթացքում տեղի են ունեցել նաև պետական փողերի վատնումներ, յուրացումներ, փոշիացում և այլն: Մանավանդ որ հնարավոր էլ չէր բավարար հաշվառում և վերահսկողություն իրականացնել Երևանից մինչև Զանգեզուր և Իրան գաղթականության ու զինվորականության հետ շարունակաբար տեղաշարժերի մեջ գտնվող ՀՓԿ-ի և Հայաստանի կառավարության կողմից: Անգամ տարօրինակ կլիներ, որ նման արտասովոր իրավիճակում՝ ոչ բավարար հաշվառման ու վերահսկողության պայմաններում, տեղի չունենային փողերի և այլ միջոցների վատնումներ ու չարաշահումներ: Արձանագրվել են դեպքեր, երբ պետական միջոցները անձնական նպատակով են օգտագործել նաև առանձին բարձրաստիճան պաշտոնյաներ: Դա երևում է 1921 թ. հուլիս-սեպտեմբեր ամիսներին Գարեգին Նժդեհի գործի վերաբերյալ Թավրիզում ՀՅԴ Գերագույն դատական մարմնի կողմից անցկացված դատավարության ժամանակ: Պարզվում է, որ հար-

44 **Իրազեկ Յ.,** նույն տեղում, էջ 151-153:
45 Նույն տեղում, էջ 142:
46 Նույն տեղում:
47 Նույն տեղում, էջ 143:
48 Նույն տեղում, էջ 146:

ցաքննությունների ու վկայությունների ժամանակ պետական միջոցների վատնման, անձնական, շահադիտական նպատակներով օգտագործման փաստեր են արձանագրվել պարենավորման նախարար Հ. Տեր-Հակոբյանի (Իրազեկի), փոխվարչապետ Արշ. Հովհաննիսյանի, Արշ. Աստվածատրյանի և այլոց վերաբերյալ: Մասնավորապես Գ. Նժդեհը ՀՅԴ Գերագույն դատական մարմնին ներկայացրած մի բացատրագրում ամբաստանական խոսքեր է ուղղել վերոնշյալ անձանց հասցեին[49]: Այսպես, նշվում է, որ այն ժամանակ, երբ Սյունիքի ժողովուրդն ու զաղթականությունը կիսասոված վիճակում էին, Հ. Տեր-Հակոբյանը իր ձիու համար խոտ էր գնում ոսկով: Որ իր (Նժդեհի) մարդկանց կողմից նրա խուզարկության ժամանակ հայտնաբերվել է 125 թուրքական ոսկե լիրա, իսկ Ա. Աստվածատրյանի մոտ՝ 250 թուման, այն դեպքում, երբ ժողովուրդը սնվում էր ավազախառը ցորենով: Դատավարությունից հետո Հ. Տեր-Հակոբյանը Թավրիզից Երևանում գտնվող կնոջը ուղարկել է 10 ոսկի և այլն[50]:

Գ. Նժդեհը քննադատել է նաև փոխվարչապետ Արշ. Հովհաննիսյանի «կարճամիտ ու անհեռատես» քայլը: Նրա պնդմամբ՝ վերջինս բանակցություններ է սկսել Մինքենդի 2000-ի հասնող զինված թուրք քոչվորների հետ և 50 միլիոն հայկական չեկով Սիսիանի ամենակարևոր ճակատը որպես արոտատեղի հանձնել է նրանց՝ դրանով փաստորեն հնարավորություն տալով կապվել Նախիջևանի թրքության հետ և արագացնել Սիսիանի և Դարալագյազի անկումը[51]:

Պարզվում է, որ դրամական միջոցները ոչ միշտ են հատկացվել նպատակային ու հասցեական: 1921 թ. ապրիլի 27-ի Տաքևի համազանգեզուրյան համագումարում Ս. Վրացյանի կառավարությունը պարտավորվել էր նորահռչակ Լեռնահայաստանի կառավարության տրամադրության տակ դնել Հայաստանի բոլոր ռազմական ուժերը, փոքրաթիվ գույքը, այդ թվում՝ դրամական արժեքների մի մասը՝ 50 հազար ռուբլի ոսկին՝ ժողովրդի և զորքի կարիքները հոգալու համար[52]: Սակայն Գ. Նժդեհի 1921 թ. ամռան-աշնան դատավարության գործի նյութերից պարզվում է, որ այդ գումարը այդպես էլ չի հատկացվել[53]:

Այսպիսով, պետական փողերի խնդրի հետ կապված փաստերի ուսումնասիրությունը մեզ բերում է այն հետևությանը, որ խորհրդահայ և սփյուռքի պատմագիտական և հուշագրական գրականության մեջ որպես կանոն՝ միակողմանի հակադաշնակցական դիրքերից ու քարոզչական նպատակով է ներկայացվել ՀՓԿ-ի կողմից Երևանից տարված պետական փողերի իրացման խնդիրը: Այն ավելի շատ ներկայացվել է որպես կողոպուտ, վատնում և յուրացում: Մինչդեռ դեպքերի ու իրադարձությունների բերումով Երևանից դուրս բերված 10 մլրդ ռուբլին և մնացած արժեքները, վստահաբար կարելի է ասել, որ հիմնականում ծախսվել են նպատակային՝ տարագիր բազմաշերտ ու բազմահոգս գաղթականության խնամատարության, նախկին վարչական ապարատի, մտավորականության ու զինվորականության պահպանման, կրթամշակութային և քաղաքական բնույթի խնդիրների վրա:

Միաժամանակ փաստական տվյալները ցույց են տալիս, որ դրա հետ մեկտեղ, եղել են նաև պետական փողերի վատնումներ ու առանձին յուրացումներ,

---

49 **Նժդեհ Գ.**, Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 408-411:
50 **Հարությունյան Ա.**, նույն տեղում, էջ 29-30:
51 Նույն տեղում, էջ 89-90:
52 Նույն տեղում, էջ 76, նաև **Գ. Նժդեհ,** Երկեր, հ. 2, Եր., 2002, էջ 153:
53 **Հարությունյան Ա.**, նույն տեղում, էջ 90:

որոնք, սակայն, անխուսափելի էին նման արտասովոր պայմաններում:


**Summary**

## IN THE FOOTSTEPS OF AN INDICTMEN

### The Issue Surrounding the Appropriation of State Funds by the Committee for the Salvation of the Fatherland

Ararat M. Hakobyan

One of the most controversial issues in Armenian historiography is the appropriation of state funds by the Committee for the Salvation of the Fatherland following the defeat of the 1921 February Rebellion. Soviet Armenian historiography in particular, inspired by political objectives, has presented a one-sided version of the appropriated state funds taken from Yerevan by the Committee for the Salvation of the Fatherland.

This incident was presented as looting, squander and appropriation. Meanwhile, due to events and the existing situation, the 10 billion Rubles taken from Yerevan and the remaining valuables were spent with the objective of taking care of the 10,000 outcast refugees, members of the former administrative apparatus, for the protection of intellectuals and military personnel, and those issues pertaining to an educational, cultural and political nature. Simultaneously, a number of facts show that along with this targeted spending, there were funds that we squandered and looted, something which was unavoidable taking into consideration the conditions of the extraordinary situation.